# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
# (2024թ.)

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում և աջակցում է մարզային ենթակայությամբ **44 հանրակրթական ուսումնական հաստատությունների և 3 մարզային մշակութային ՊՈԱԿ-ների** գործունեությունը /Եղեգնաձորի երաժշտական դպրոց, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Եղեգնաձորի մշակույթի կենտրոն/:

Աջակցում է նախարարության ենթակայությամբ 3 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների */ Եղեգնաձորի վարժարան, Վայքի ավագ դպրոց, Ջերմուկի կրթահամալիր/* և համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական, մշակութային և մարզական հաստատությունների օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու գործընթացին:

**ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են 18 նախադպրոցական ուսումնական հաստատություններ :**

**Եղեգնաձոր համայնք – 8 ՆՈՒՀ / նախադպրոցական ուսումնական հաստատություն/**

1. <<Վերնաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
2. <<Գլաձորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
3. <<Եղեգնաձոր համայնքի թիվ 2 մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ
4. <<Եղեգնաձոր համայնքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
5. <<Մալիշկայի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
6. <<Մալիշկայի թիվ 2 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
7. <<Եղեգնաձոր համայնքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
8. << Գետափի «Արևիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ

**Արենի համայնք - 5 ՆՈՒՀ**

1. <<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ
<<Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայրի «Արևիկ» մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի մասնաճյուղ Խաչիկ բնակավայրում

2 .<<Արփիի մանկապատեզ>> ՀՈԱԿ

3. <<Աղավնաձորի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

4. <<Ռինդի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

5. <<Լիսա Գրիգորյանի անվան>> ՀՈԱԿ մանկապարտեզ

**Վայք համայնք - 3 ՆՈՒՀ**

1. <<Զառիթափի մանկապարտեզ>> ՀՈԱԿ
2. <<Վայքի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ
3. <<Վայքի թիվ 3 մանկապարտեզ>> ՀՈԱԿ

**Ջերմուկ համայնք - 2 ՆՈՒՀ**

1. «Զատիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ

«Զատիկ» մանկապարտեզ» ՀՈԱԿ- ի մասնաճյուղ Կեչուտում

2. «Գնդեվազի մանկապարտեզ» ՀՈԱԿ

Ելփինի մանկապարտեզի կառուցման աշխատանքները ընթացքի մեջ են:

**Մարզում գործում են համայնքային ենթակայությամբ 3 մանկապատանեկան մարզադպրոց.**

1.<<Վայք համայնքի մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ

2.<<Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց>> ՀՈԱԿ

3.<<Մալիշկայի մարզադպրոց>> ՀՈԱԿ

***1** մարզամշակութային կենտրոն Ջերմուկ համայնքում*

Մարզում գործում է **2 թանգարան՝**

1. <<Գլաձորի պատմամշակութային արգելոց-թանգարան>>՝ ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ
2. << Եղեգնաձորի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ՝ մարզային ենթակայությամբ:

1 երաժշտական դպրոց Եղեգնաձոր քաղաքում.

<<Եղեգնաձորի երաժշտական դպրոց>> ՊՈԱԿ՝ մարզային ենթակայությամբ

**4 արվեստի դպրոց՝** համայնքային ենթակայությամբ.

1. <<Աղավնաձորի Մուրադ Սարգսյանի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ
2. <<Ջերմուկ համայնքի Ռոմանոս Մելիքյանի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ
3. <<Ջերմուկ համայնքի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ
4. Վայք քաղաքում՝ <<Խ. Ներսիսյանի անվան արվեստի դպրոց>> ՀՈԱԿ

*Մարզում գործում է* ***2 պատկերասրահ՝*** Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում, **2 ՄՍԿ (մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն)՝** Վայք և Եղեգնաձոր քաղաքներում, **Մեկ գեղարվեստի դպրոց՝** Եղեգնաձոր քաղաքում:

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են.

Մեկ տարածաշրջանային պետական քոլեջ՝ Եղեգնաձոր քաղաքում,

*Մեկ կրթահամալիր Ջերմուկ քաղաքում ,*

*Մեկ ավագ դպրոց Վայք քաղաքում ,*

*Մեկ վարժարան Եղեգնաձոր քաղաքում,*

*13 հիմնական և 31 միջնակարգ դպրոցներ:*

ՀՀ կառավարության կողմից բազմաթիվ ծրագրեր են իրականացվում կրթության ոլորտում: Վերանորոգվում են ուսումնական հաստատությունների շենքեր, կառուցվում են նորերը:

**Կառուցվել է 3 դպրոց.**

1. Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց

2. Գոմքի միջնակարգ դպրոց
3. Եղեգիսի միջնակարգ դպրոց

4. **Կառուցվում է 1 դպրոց.**

Չիվայի միջնակարգ դպրոց

**Կառուցվելու են 4 կրթահամալիրներ.**

1. Արտաբույնքի կրթահամալիր
2. Արփիի կրթահամալիր
3. Մարտիրոսի կրթահամալիր
4. Քարագլխի կրթահամալիր

Կառուցվելու են **միջնակարգ դպրոցներ.**

1. Գետափի միջնակարգ դպրոց
2. Արենիի միջնակարգ դպրոց

2024 թ. նոյեմբերին իրականացվել է «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Մոզրովի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը ՀՀ Վայոց ձորի մարզի Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը միացման ձևով վերակազմակերպում՝ համաձայն ՀՀ Կառավարության 26.09.2024թ.-ի թիվ 1503-Ա որոշման:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024թ.-ի հունվարի 09-ի 09-Ա որոշմամբ ստեղծվել է աշխատանքային խումբ՝ մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում մշտադիտարկումներ իրականացնելու, ուսումնական հաստատության կողմից ՀՀ օրենքների և նորմատիվ-իրավական ակտերի պատշաճ կատարումը դիտարկելու, ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգման, դպրոցավարությանն անհրաժեշտ փաստաթղթերին և գործառույթներին ծանոթացման, դասալսումների իրականացման, անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցության տրամադրման նպատակով:

2024 թվականի օգոստոս ամսին Վայոց ձորի մարզի մարզային ենթակայությամբ գործող 44 ուսումնական հաստատություններում իրականացվել է կանոնադրության փոփոխություն՝ կրթության ոլորտը կարգավորող օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու նպատակով:

Ուսումնական հաստատություններում ստեղծվել են կոլեգիալ կառավարման մարմիններ՝ թվով 8-ը, որոնց անվանական կազմը հաստատվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի համապատասխան որոշմամբ:

Մարզային ենթակայության 44 դպրոցումներում աշխատում են 735 ուսուցիչներ, որոնցից 193-ը կամավոր ատեստավորված են:

**Տարակարգ ստացած ուսուցիչներ**ի թիվը 26 է:

**ԼՂ-ից բռնի տեղահանված և գործուղման կարգով ՀՀ Վայոց ձորի մարզի մարզային ենթակայությամբ գործող դպրոցներում աշխատող ուսուցիչներ՝ 17:**

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

**2023-2024 ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլին մասնակցել է՝**

ա) 9-12-րդ դասարաններ՝ 1316 աշակերտ

բ) 5-8-րդ դասարաններ («Մաթեմատիկա» առարկա)- 2385 աշակերտ

Ընդհանուր՝ 3701 աշակերտ:

Մարզային փուլ**ին մասնակցել է** 359 աշակերտ:

Հանրապետական փուլ**ին՝** 48 աշակերտ:

Հանրապետական փուլի արդյունքներով՝ <<Հայ գրականություն>> առարկայից II տեղի արժանացել է 1 աշակերտ, իսկ <<Աշխարհագրություն>> և <<Պատմություն>> առարկաներից 2 աշակերտ արժանացել է գովասանագրի:

**2024-2025ուսումնական տարվա դպրոցականների առարկայական օլիմպիադա**

***Դպրոցական փուլին*** մասնակցած աշակերտների թիվը՝

ա) 8-12-րդ դասարանների աշակերտներ (բոլոր առարկաներից) – ***2363***

բ) 5-7-րդ դասարանների աշակերտներ (մաթեմատիկա) – ***334***

***Դպրոցական փուլի մասնակիցների ընդհանուր թիվը -2697***

***Մարզային փուլի*** մասնակիցների թիվը

ա) 8-12-րդ դասարանների աշակերտներ (բոլոր առարկաներից) – ***171***

բ) 5-7-րդ դասարանների աշակերտներ (մաթեմատիկա) -***11***

***Մարզային փուլի*** մասնակիցների ընդհանուր թիվը – ***182***

**Հանրապետական փուլը մեկնարկել է փետրվարի 15-ից և կավարտվի ապրիլի 27-ին:**

Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում 2024 թվականի ընթացքում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ, որոնք նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը:

Համագործակցելով ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայի հետ՝ մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների 10-12–րդ դասարանների աշակերտների *(ավելի քան 120 աշակերտ)* համար կազմակերպվել է այցելություն ռազմական ակադեմիա: Համագործակցելով Մոնթե Մելքոնյանի անվան ռազմական վարժարանի ղեկավարության հետ՝ հանդիպումներ են կազմակերպվել վարժարանի դասախոսական կազմի, սաների և Վայոց ձորի մարզի դպրոցների ավարտական դասարաններում սովորող աշակերտների հետ:

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցում օգոստոսի 27-ին անցկացվեց օգոստոսյան խորհրդակցությունը հանրակրթական

դպրոցների, նախադպրոցական և արտադպրոցական հաստատությունների տնօրենների, վարչատնտեսական մասի համակարգողների մասնակցությամբ:

Խորհրդակցությունների ավանդական ձևաչափը այս տարի փոխվել էր. առաջին անգամ կազմակերպվել է նաև կրթական էքսպո՝ Հանրակրթության պետական նոր չափորոշչի ներդրման շրջանակում լավագույնս հանդես եկած և չափորոշչի ներդրման լավագույն փորձի խրախուսմանն ուղղված նախաձեռնության շրջանակում ամսվա լավագույնը ճանաչված տնօրենների, նրանց տեղակալների, ուսուցիչների և խմբավարների մասնակցությամբ:

**Մարզի մշակութային կազմակերպությունների մասնակցությամբ նախապես մշակված պլանով և ժամանակացույցով իրականացվել են մշակութային միջոցառումներ.**

- **«Ֆեստիվառ» զբոսաշրջային երաժշտական փառատոն**

Օգոստոսի 24-ին Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում տեղի է ունեցել «Ֆեստիվառ» զբոսաշրջային երաժշտական փառատոնը:

«Ֆեստիվառ» զբոսաշրջային երաժշտական փառատոնն անցկացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության և Հանրային հեռուստաընկերության համագործակցությամբ:

Փառատոնի շրջանակներում Վայոց ձորի արտադրողները «Ֆեստիվառի» տաղավարներում ներկայացրել են իրենց ապրանքներն ու ծառայությունները, ինչպես նաև կազմակերպել են խեցեգործության և ծղոտագործության վարպետաց դասեր:

Փառատոնի շրջանակում գործել է նաև անվճար երթուղի դեպի Մագելանի քարանձավ և Նորավանք: Ցերեկային ժամերին մարզի գեղարվեստական խմբերը և անհատ կատարողները երաժշտական բարձրաճաշակ կատարումներով հաճելի պահեր են պարգևել ներկաներին:

Երեկոյան Եղեգնաձորի քաղաքային ամֆիթատրոնում փառատոնը զարդարել են Լադանիվա խմբի էթնոռիթմերը. խմբի մենակատար, ծնունդով եղեգնաձորցի Ժակլինը վառ տպավորություններ է հաղորդել հանդիսատեսին:

- **«Արվեստների և արհեստների» 12-րդ միջազգային փառատոն**

Սեպտեմբերի 7-ին Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում անց է կացվել արդեն ավանդական դարձած «Արվեստների և արհեստների» 12-րդ միջազգային փառատոնը, որն այս անգամ կրում էր «Տուրիզմը միավորում է մշակույթներ» խորագիրը:

Փառատոնին գեղեցիկ տաղավարներով իր մասնակցությունն ունեցավ նաև Վայոց ձորի մարզը՝ ներկայացնելով շնորհաշատ և տաղանդավոր անհատների դեկորատիվ, գեղարվեստական աշխատանքները, գեղարվեստական խմբերի կատարումներ:

Անցկացվեցին ծղոտագործության, խաչքարագործության, կավագործության, նկարչության վարպետաց դասեր:

Ցուցադրվեց նաև Վայոց ձորի մարզի մշակութային կյանքի,գեղատեսիլ վայրերի, զբոսաշրջային հնարավորությունների մասին պատմող տեսահոլովակ:

Փառատոնին երկար տարիներ բարձր մակարդակով մասնակցություն ունենալու և մարզում ազգային ավանդույթները լավագույնս պահպանելու համար Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը արժանացավ շնորհակալագրի:

- **«Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի Էքսպո-արշավ**

Սեպտեմբերի 14-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության նախաձեռնությամբ և Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի հետ համագործակցությամբ Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում կազմակերպվեց «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի Էքսպո-արշավ, որին տաղավարներով ներկայացել էին մարզում գործող մշակութային օջախները:

Ցուցադրությանը ներկա էին նաև մարզպետի աշխատակազմի, ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներ, հյուրեր, ուսուցիչներ և աշակերտներ:

Նախաձեռնությունը նպատակ ունի ընդլայնելու մշակույթի դերը կրթական գործընթացներում՝ նպաստելով դպրոցականների՝ հանրակրթության պետական չափորոշչով սահմանված առանցքային կարողունակությունների ձևավորմանը, ազգային արժեհամակարգի և լայն աշխարհայացքի կայացմանը:

Մշակութային կրթության տարվա մեկնարկի շրջանակում «Դպրոցական բաժանորդային համակարգ» ծրագրի Էքսպո-արշավի հիմնական նպատակն էր ստեղծել իրազեկման հարթակ ծրագրին միացած մշակութային կազմակերպությունների և դպրոցների համար,

որտեղ շահառու ուսումնական հաստատություններին ներկայացվում է մարզի մշակութային ներուժը: Միջոցառումն ուղեկցվեց երաժշտական գեղեցիկ կատարումներով:

- **Արհեստների միջազգային երրորդ փառատոն՝ «Գինի և արհեստներ» խորագրի ներքո**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական արվեստների թանգարանի նախաձեռնությամբ Վայոց ձորի մարզի Արենի համայնքում անցկացվել է Արհեստների միջազգային երրորդ փառատոնը՝ «Գինի և արհեստներ» խորագրի ներքո, որով նաև տրվել է Եվրոպայում նշվող ամենաընդգրկուն և ամենամասնակցային միջոցառումներից մեկի՝ «Եվրոպական ժառանգության օրերի» մեկնարկը մեր երկրում:

Փառատոնի ընթացքում Արենի համայնքում ներկայացվել են հայ և այլ ժողովուրդների ազգային արհեստները՝ գորգագործություն, ասեղնագործություն, ժանեկագործություն, տիկնիկագործություն, փայտագործություն, խեցեգործություն, դարբնություն, զարդագործություն, ծղոտագործություն և այլն:

- 2024 թվականին **Եղեգնաձորի երաժշտական դպրոցի** համար եղավ ձեռքբերումներով լի տարի: Դպրոցն ակտիվորեն մասնակցել է միջազգային և հանրապետական մրցույթ-փառատոներին ՝ արժանանալով բարձր պարգևների և մրցանակային տեղերի:

  Տարվա ընթացքում կազմակերպվել են նաև համերգներ՝ նվիրված բանակի օրվան, մայրության տոնին, ինչպես նաև միացյալ համերգներ Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր դպրոցներ» ծրագրի շրջանակներում:

  Հունիսի 19-ին Եղեգնաձորի երաժշտական դպրոցի Ֆ.Բալոյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ հաշվետու համերգ:

  Ամփոփելով ուսումնական տարին՝ Եղեգնաձորի երաժշտական դպրոցը հաշվետու համերգով ներկայացրեց ողջ տարվա աշխատանքի արդյունքներն ու ձեռքբերումները:

  2023-2024 ուստարվա ընթացքում Եղեգնաձորի երաժշտական դպրոցից հանրապետական և միջազգային մրցույթներին մասնակցած և մրցանակային տեղեր զբաղեցրած երեխաներին հանձնվեցին դիպլոմներ, մեդալներ, ինչպես նաև շնորհակալագրեր ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից:

- **Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում** կազմակերպվել են համերգներ, ցուցադրվել են ֆիլմեր:

**«Կոմիտասից Ազնավուր» խորագրով համերգ**

Դեկտեմբերի 3-ին Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում տեղի ունեցավ «Արմենիան» երաժշտական ստուդիայի՝ «Կոմիտասից Ազնավուր» խորագրով համերգ:

Հայ և համաշխարհային երաժշտության և երգարվեստի երկու հզոր անհատականությունների 155-ամյա և 100-ամյա հոբելյանների շրջանակում կազմակերպված համերգի ժամանակ ստուդիայի սաները գեղարվեստական հրաշալի կատարումներով հանդիսատեսին պարգևեցին հիացմունք և բավականություն:

Մշակութային երկու հսկաների կյանքի դրվագների ներկայացմամբ հանդիսատեսը մեկ անգամ ևս խորհեց հայի ինքնության, ազգային արժեքների և դիմագծի պահպանման, հայրենասիրության, հաջողություն կերտելու ճանապարհին համառ պայքարի և աննահանջ երթի մասին:

- **Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում** կազմակերպվել են միջոցառումներ և ցուցադրություններ:
- «Գլաձորի համալսարանը և Վայոց ձորի ուսումնական կենտրոնները» թեմայով բանախոսություն:
- «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառման շրջանակում «Գեղանկարչի խոսքը վրձնով» ցուցահանդես:
- Ոչ նյութական մշակութային ժառանգության միջազգային օրվան նվիրված բանախոսություն՝ «Հայոց ուտեստի համակարգը»:
- Բանախոսություն. «Հայոց թագուհիներ»:

Թանգարանների միջազգային օրվա և Թանգարանների գիշեր միջոցառումների շրջանակներում Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում կազմակերպված միջոցառումներ.

- «Բացահայտելով Վայոց ձորի քարանձավները» սեմինար «Թանգարաններ. կրթություն և հետազոտություն» խորագրի ներքո:

- «Զրույց կավի հետ» վարպետաց դաս «Թանգարաններ. կրթություն և հետազոտություն» խորագրի ներքո:
- «Երաժշտություն. սերունդների համերաշխության սիմվոլ» երաժշտական կատարումներ խարույկի շուրջ «Թանգարաններ. կրթություն և հետազոտություն» խորագրի ներքո:
- «Թագակիրներ» ֆիլմի դիտում և զրույց-քննարկում «Թանգարաններ. կրթություն և հետազոտություն» խորագրի ներքո:

- 2024-2025 ուսումնական տարին որպես կրթամշակութային տարի դիտարկելու և դրա շրջանակներում մշակույթի և կրթության կապը ապահովող, բացահայտող, ամրապնդող տարաբնույթ միջոցառումների իրականացմանը միտված՝ ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցներում կազմակերպվել են կրթադաստիարակչական, ճանաչողական, ոչ նյութական մշակութային արժեքների պահպանմանն ու տարածմանն ուղղված միջոցառումներ:
- Մանագիտական կողմնորոշման նպատակով՝ «Քո արվեստը դպրոցում» ծրագրի շրջանակներում 2024թ. հոկտեմբեր ամսին մարզի դպրոցների շուրջ 450 աշակերտների մասնակցությամբ հանդիպումներ են անցկացվել անվանի մշակութային գործիչների, արվեստագետների հետ:

## ՍՊՈՐՏ

2024 թվականին մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ անցկացնելու համար համապատասխան կազմակերպությունների հետ մշակվել է միջոցառումների պլան, և ըստ ժամանակացույցի՝ վերահսկվել են միջոցառումների նախապատրաստական և իրականացման աշխատանքները:

Վայոց ձորի մարզում 2024 թվականին անցկացվել են ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի առաջնություններ, հուշամրցաշարեր, դպրոցականների սպորտլանդիաներ, սպարտակիադաներ, ռազմամարզական խաղեր:

**1.** «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող Սպորտլանդիա» մարզական միջոցառում:

2024 թվականի մարտի 21-ից Վայոց ձորի մարզում մեկնարկեց «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 1-3-րդ և 4-6-րդ դասարանների աշակերտների միջև անցկացվող Սպորտլանդիա» մարզական միջոցառումը, որը կազմակերպվում է 4 փուլով:

Ներդպրոցական փուլից հետո ձևավորված թիմերը մասնակցեցին 2-րդ՝ համայնքային փուլին: Եղեգնաձորի տարածաշրջանից մասնակցեցին 120 և 140 աշակերտ, Վայքի տարածաշրջանից՝ 70-ական աշակերտ երկու տարիքային խմբերում:

Համայնքային փուլին մասնակցել է ընդհանուր **400 աշակերտ**:

2024 թվականի մայիսի 9-ին Վանաձորում կայացած «Սպորտլանդիա» մարզական միջոցառման եզրափակիչ փուլում Վայոց ձորի մարզը 1-3-րդ դասարանների մրցապայքարում ներկայացնող **Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի թիմը գրավեց 3-րդ պատվավոր տեղը:**

Թիմը պարգևատրվել է բրոնզե մեդալներով, գավաթով, հավաստագրով, սպորտային համազգեստներով, իսկ դպրոցին տրվել է դրամական պարգև՝ սպորտային գույք ձեռք բերելու համար:

**2. «Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա» մարզական միջոցառումներ. Ընդհանուր՝ 841 մասնակից, որից 230 աղջիկ, 611 տղա**

- **Ֆուտզալ /Վայքի տարածաշրջան՝** 6 դպրոց, **60** մասնակից, **Եղեգնաձորի տարածաշրջան՝** 12 դպրոց, **120** մասնակից /, ընդհանուր՝ **180 մասնակից:**

  Սեպտեմբերի 17-ին մեկնարկեց <<Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա>> մարզական միջոցառումը:

  Առաջին մարզաձևը ֆուտզալն էր, որտեղ մարզային փուլում հաղթող ճանաչվեց Գլաձորի միջնակարգ դպրոցի թիմը:

Հոկտեմբերի 7-ին Եղեգնաձոր քաղաքում անցկացվեց Ֆուտզալի միջմարզային փուլը, որին մասնակցում էին Սյունիքի ,Արարատի և Վայոց ձորի թիմերը: Գլաձորի թիմը, հաղթելով երկու մարզերի թիմերին, գրավեց 1-ին տեղը և իրավունք ստացավ մասնակցելու եզրափակիչ փուլին:

Ֆուտզալի եզրափակիչ /հանրապետական փուլ/ 2024 թվականի հոկտեմբերի 16-ին Վայոց ձորի մարզի **Գլաձորի միջնակարգ դպրոցի հավաքականը գրավել է 3-րդ պատվավոր տեղը՝ արժանանալով բրոնզե մեդալի և հավաստագրի:**

- **Բազկամարտ** / մարզային փուլի մասնակիցներ՝ **68,** որից 24 աղջիկ, 44 տղա , հանրապետական փուլ՝ 10 մասնակից , որից 4 աղջիկ, 6 տղա/

Հոկտեմբերի 8-ին անցկացվեց <<Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների միջև սպարտակիադա>> մարզական միջոցառման բազկամարտի մարզային փուլի առաջնությունը և ձևավորվեց մարզի հավաքականը տասը քաշային կարգերում:

Նոյեմբերի 18-ին Երևանում անցկացվեց բազկամարտ մարզաձևի եզրափակիչ մրցույթը: Աղջիկների մենապայքարում **65 կգ քաշային կարգում, Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոցի աշակերտուհի Գոհար Մելքոնյանը արժանացավ արծաթե մեդալի, գավաթի և ԿԳՄՍ նախարարության կողմից պատվոգրի:**

**65 պլյուս քաշային կարգում** Արինի միջնակարգ դպրոցի աշակերտուհի **Մելինե Առաքելյանը պարգևատրվեց արծաթե մեդալով, գավաթով և պատվոգրով:**

- **Հնգամարտ** / մարզային փուլ՝ **52** մասնակից, որից 16 աղջիկ, 36 տղա , հանրապետական փուլ՝ 10 մասնակից , որից 5 աղջիկ, 5 տղա/

  Սեպտեմբերի 24-ին սպարտակիադայի ծրագրով անցկացվեց հնգամարտի մարզային փուլը, որտեղ էլ ձևավորվեց մարզի հավաքականը:

  Հոկտեմբերի 30-ին Արտաշատում անցկացվեց հնգամարտ մարզաձևի մրցույթը: Մեր թիմը գրավեց **5-րդ տեղը:**

- **Սեղանի թենիս** / մարզային փուլ՝ **36** մասնակից, որից 12 աղջիկ, 24 տղա , հանրապետական փուլ՝ 5 մասնակից , որից 2 աղջիկ, 3 տղա/

Հոկտեմբերի 28-ին սպարտակիադայի ծրագրով անցկացվեց սեղանի թենիսի մարզային փուլը, որտեղ էլ ձևավորվեց մարզի հավաքական թիմը:
Նոյեմբերի 16-ին Երևանում անցկացվեց դպրոցականների սպարտակիադայի ծրագրով անցկացվող սեղանի թենիսի թիմային առաջնությունը: Վայոց ձորի թիմը գրավեց 8-րդ տեղը:

- **Բասկետբոլ / Վայքի տարածաշրջան՝** 5 դպրոց, **80** մասնակից, որից 30 աղջիկ, 50 տղա, **Եղեգնաձորի տարածաշրջան՝** 8 դպրոց **120** մասնակից, որից 40 աղջիկ, 80 տղա/, ընդհանուր՝ **200 մասնակից:**

  Հոկտեմբերի 11-ին Վայք քաղաքում անցկացվել է բասկետբոլի մարզային փուլը: Հաղթողներ են ճանաչվել Վայքի ավագ դպրոցի տղաների և Արփիի միջնակարգ դպրոցի աղջիկների հավաքականները, որոնք էլ մարզը ներկայացրեցին միջմարզային փուլում:
  Հոկտեմբերի 23-ին Վայքում տեղի ունեցավ սպարտակիադայի բասկետբոլի մրցաշարի միջմարզային փուլը, որին նույնպես մասնակցում էին Սյունիքի, Վայոց ձորի և Արարատի մարզերը: Վայոց ձորի թիմը **միջմարզային փուլում գրավեց 2-րդ տեղը:**

- **Վոլեյբոլ / Վայքի տարածաշրջան՝** 6 դպրոց, **100** մասնակից, որից 40 աղջիկ, 60 տղա, **Եղեգնաձորի տարածաշրջան՝** 10 դպրոց **130** մասնակից, որից 40 աղջիկ, 90 տղա/, **ընդհանուր՝ 230 մասնակից:**

  Հոկտեմբերի 9-ին սպարտակիադայի ծրագրով անցկացվել է վոլեյբոլի մարզային փուլը: Հաղթող են ճանաչվել Եղեգնաձորի վարժարանի տղաների և աղջիկների թիմերը:
  Հոկտեմբերի 21-ին Եղեգնաձորում տեղի ունեցավ սպարտակիադայի վոլեյբոլի մրցաշարի միջմարզային փուլը, որին մասնակցում էին Սյունիքի ,Վայոց ձորի և Արարատի մարզերը: **Վայոց ձորի թիմը միջմարզային փուլում գրավեց 2-րդ տեղը:**

- **Հրաձգություն** / մարզային փուլ՝ **34** մասնակից, որից 15 աղջիկ, 19 տղա , հանրապետական փուլ՝ 8 մասնակից , որից 4 աղջիկ, 4 տղա/
  Սեպտեմբերի 23-ին սպարտակիադայի ծրագրով անցկացվեց հրաձգության մարզային փուլը, որտեղ էլ ձևավորվեց մարզի հավաքականը:

Հոկտեմբերի 2-ին մարզի դպրոցականների հրաձգության հավաքականը մասնակցեց սպարտակիադայի ծրագրով անցկացվող հրաձգության հանրապետական փուլին և գրավեց **6-րդ տեղը:**

- **Շախմատ** / մարզային փուլ՝ **41** մասնակից, որից 13 աղջիկ, 28 տղա , հանրապետական փուլ՝ 5 մասնակից , որից 2աղջիկ, 3 տղա/

  Նոյեմբերի 19-20-ը Երևանի շախմատի տանը դպրոցականների սպարտակիադայի ծրագրով անցկացվեց շախմատի եզրափակիչ փուլը: Վայոց ձորի թիմը **գրավեց 8-րդ տեղը:**

**3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր ՝ ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ / մայիսի 3-ին /**

2024թ. մայիսի 3-ը ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշմամբ հայտարարվել էր <<Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի օր>>՝ մարզի բնակչության առողջության ամրապնդման, ֆիզիկական զարգացման ապահովման, ինչպես նաև ֆիզիկապես կոփված ու բարոյապես կայուն սերնդի ձևավորմանը խթանելու նպատակով:

**4. Առողջ ապրելակերպի արշավ՝ շուրջ 500 դպրոցականներ /մայիսի 16/**

Առողջապահության նախարարության կողմից Վայք քաղաքում, 2024թ. մայիսի 16-ին կազմակերպվեց «Առողջ ապրելակերպի արշավ», որին մասնակցեցին շուրջ 500 դպրոցականներ: Միջոցառման նպատակն էր իրազեկել բնակչությանը առողջ ապրելակերպի մասին, խրախուսել առողջ սննդի պատրաստումը, ֆիզիկական ակտիվությունը, առողջ վարքագծի ձևավորումը:

**5. Ռազմամարզական խաղեր /Վայքի տարածաշրջան՝** 9 դպրոց, **81** մասնակից, **Եղեգնաձորի տարածաշրջան՝** 14 դպրոց, **126** մասնակից /

**Ընդհանուր՝ 207 մասնակից**

Սեպտեմբերի 26-27-ին անցկացվել է նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղերի Վայքի և Եղեգնաձորի տարածաշրջանային

փուլերը: Վայքի տարածաշրջանում հաղթողներ ճանաչվեցին Վայքի ավագ և Ջերմուկի թիվ 3 միջնակարգ դպրոցները, իսկ Եղեգնաձորի տարածաշրջանում՝ Եղեգնաձորի վարժարանը և Արենիի միջնակարգ դպրոցը:

Հոկտեմբերի 18-ին Եղեգնաձորի մարզադաշտում տեղի ունեցավ ռազմամարզական խաղերի մարզային փուլը: Հաղթող ճանաչվեց Արենիի միջնակարգ դպրոցի թիմը և իրավունք նվաճեց մասնակցելու հանրապետական փուլին:

Հոկտեմբերի 24-26-ը Արմավիրում տեղի ունեցավ ռազմամարզական խաղերի եզրափակիչ փուլը: Արենիի միջնակարգ դպրոցի թիմը գրավեց 4-րդ պատվավոր տեղը: Առանձին մարզաձևերում հրաձգության և նռնակի նետման մրցույթներում գրավեցին առաջին տեղը:

## 6. «ՀՀ Վարչապետի գավաթ» խորագրով մրցաշարեր

**«ՀՀ Վարչապետի գավաթ» խորագրով մրցաշարերի մասնակիցների ընդհանուր թիվը՝ 356, որից 133 աղջիկ, 223 տղա**

- **«ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշար**

/**Վայքի տարածաշրջան՝** 6 դպրոց, **24** մասնակից, որից՝ 12 աղջիկ, 12 տղա/ **Եղեգնաձորի տարածաշրջան**՝ 13 դպրոց, **52** մասնակից, որից՝ 26 տղա, 26 աղջիկ /: **Ընդհանուր՝ 76 մասնակից:**

Ապրիլի 18-ին Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոցում տեղի ունեցան «ՀՀ Վարչապետի գավաթ» սեղանի թենիսի սիրողական մրցաշարի Վայոց ձորի մարզային փուլի մրցումները, որին մասնակցելու իրավունք էին ստացել համայնքային փուլի մրցապայքարում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղեր գրաված դպրոցական թիմերը:

5-9-րդ դասարանների մրցապայքարում Բարձրունու միջնակարգ դպրոցի, Չիվայի միջնակարգ դպրոցի և Վայքի հիմնական դպրոցի թիմերը գրավեցին համապատասխանաբար I, II, III տեղերը:

10-12-րդ դասարանների տարիքային խմբում առաջատարը Գնդեվազի միջնակարգ դպրոցի աշակերտներն էին, II տեղը զբաղեցրին Եղեգնաձորի ավագ դպրոցի, III տեղը՝ Վայքի ավագ դպրոցի թիմերը:

Մարզային փուլում հաղթող և մրցանակակիր դարձած թիմերը պարգևատրվեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված հավաստագրերով և գավաթներով:

Հանրապետական փուլում Գնդեվազի և Բարձրունու միջնակարգ դպրոցների թիմերը պարգևատրվեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից սահմանված մասնակցության շնորհակալագրերով և սեղանի թենիսի 1-ական խաղադաշտերով:

- **«ՀՀ Վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազք մրցաշար.**

Մարզային փուլ՝ 27 դպրոց , **189 մասնակից**, որից 54 աղջիկ, 135 տղա/

2024 թվականի մայիսի 8-ին Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում հանդիսավոր պայմաններում ամփոփվեցին մայիսի 3-ին կազմակերպված <<ՀՀ վարչապետի գավաթ>> դպրոցականների թիմային խճուղավազքի մարզային արդյունքները:

Մրցույթին մասնակցել են մարզի հանրակրթական 27 հաստատություն՝ 135 տղա և 54 աղջիկ մասնակիցներով:

Թիմային արդյունքներում 1-ին տեղը գրավել է Արենիի միջնակարգ դպրոցը և ստացել ուղեգիր դեպի Պարզ լիճ՝ մասնակցելու հանրապետական փուլին:

**Մայիսի 18-ին Դիլիջանի Պարզ լճի տարածքում կայացած եզրափակիչ փուլին Վայոց ձորի մարզը ներկայացնող Արենիի միջնակարգ դպրոցի թիմը նվաճել է երրորդ պատվավոր հորիզոնականը:**

Դպրոցն ստացել է 1, 5 մլն դրամ, ֆիզկուլտուրայի ուսուցիչը՝ 300 հազար դրամ, 75 հազար դրամ՝ թիմի յուրաքանչյուր վազորդ:

- **«ՀՀ Վարչապետի գավաթ» խճուղային հեծանվավազքի սիրողական մրցաշար.**

/Մարզային փուլ՝ 33 դպրոց, **66 մասնակից**, որից՝ 33 աղջիկ, 33 տղա/

Հեծանվային սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի գաղափարների տարածման և ֆիզիկական դաստիարակության խրախուսման նպատակով հանրապետության դպրոցներին ԿԳՄՍ նախարարության կողմից 2 փուլով տրամադրվեցին հեծանիվներ:

2024 թվականի սեպտեմբերի 20-ին առաջին անգամ «ՀՀ վարչապետի գավաթ»-ի շրջանակներում անցկացվեց խճուղային հեծանվավազքի դպրոցականների սիրողական մրցաշար:

Մարզի միջնակարգ և ավագ դպրոցների 33 թիմերը մասնակցեցին մրցույթին, որն անցկացվեց Գետափ-Մարտունի ճանապարհահատվածում:

Մրցույթի արդյունքում 1-ին հորիզոնականը գրավեց Արտաբույնքի միջնակարգ դպրոցի թիմը, 2-րդ հորիզոնականում Աղավնաձորի միջնակարգ դպրոցի աշակերտներն էին, իսկ հաղթական եռյակը եզրափակեց Արենիի միջնակարգ դպրոցի թիմը:

Հանրապետական փուլում ՀՀ Վայոց ձորի մարզը ներկայացնող դպրոցական թիմերը արժանացել են շնորհակալագրերի: Մրցանակային տեղեր չեն զբաղեցրել:

- **«ՀՀ Վարչապետի գավաթ» խճուղավազքի սիրողական մրցաշար.**

/Հանրապետական փուլ՝ **25 մասնակից**, որից՝ 8 աղջիկ, 17 տղա/

Հանրապետական փուլում ՀՀ Վայոց ձորի մարզը ներկայացնող մասնակիցները արժանացել են շնորհակալագրերի: Մրցանակային տեղեր չեն զբաղեցրել:

**7.** Հանրակրթական դպրոցներում Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից իրականացվում է **«Ֆուտբոլը դպրոցում» ծրագիրը** տարիքային 3 խմբերի համար /10-12, 12-14, 14-16 տարեկաններ/: Առաջին երկու տարիքային խմբերի համար մրցույթները անցկացվում են տարածաշրջանային և մարզային փուլերով, իսկ բարձր տարիքային խմբի համար նախատեսված է նաև հանրապետական փուլ:

Այս տարի Վայոց ձորի մարզում 1-ին և 2-րդ տարիքային խմբերում հաղթել են Գետափի միջնակարգ դպրոցի թիմերը:Թիմերի անդամները արժանացել են ՀՖՖ-ի կողմից մեդալի, գավաթի և պատվոգրի:

Բարձր տարիքային խմբում մարզում հաղթած **Վայքի հիմնական դպրոցի թիմը** **իրավունք էր ձեռք բերել մասնակցելու հանրապետական փուլին, որտեղ էլ գրավեց առաջին պատվավոր հորիզոնականը՝ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կողմից արժանանալով մեդալի, գավաթի և պատվոգրի:**

Այս տարի մարզում ծրագրում ընդգրկվել է շուրջ 636 դպրոցական տարիքային բոլոր խմբերից:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի
կրթության, մշակույթի և սպորտի
վարչության պետ Տ.Պոլուդնիցինա